

Հասմիկ Բաբայան

ԵՊՅ հայ գրականության ամբիոնի հայցորդ

ԱՐՇԱԿ ԶՈՊԱՆՅԱՆԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՅԱՑՔՆԵՐԸ «ԱՆԱՐԻՏ» ՀԱՆԴԵՍՈՒՄ

Համաշխարհային արվեստի պատմության մեջ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցան նշանակալի փոփոխություններ, որոնք հիմնականում կապված էին հասարակական և մշակութային կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ, որոնք նկատելիորեն ընդգրկում էին նաև հայ հասարակական-մշակութային դաշտը:

Հատկապես դարավերջի տասնամյակի երկրորդ կեսից արևմտահայ բանաստեղծությունն սկսում է զարգանալ՝ հիմք ունենալով մի կողմից՝ ազգային բանաստեղծության դարավոր ավանդույթները, մյուս կողմից՝ եվրոպական արվեստի նորագույն փորձը¹:

Այդ նոր իրականությունը արտացոլվում էր մամուլում՝ «Արևելք», «Մասիս», «Հայրենիք», «Ծաղիկ», «Անահիտ» և այլն: Մասնավորապես վերջին երկուսի հիմնադիր-իրատարակիչը՝ Արշակ Զոպանյանը, նպատակ ուներ վեր հանել ու ներկայացնել հին ու նոր աշխարհների արվեստը, ամբողջ հոգևոր մշակույթը: Դրանով նա փորձում էր արևմտահայ գրական միտքը կապել համաեվրոպական մշակութային դաշտին՝ վաղվա՝ հոգևոր վերածննդի ակնկալիքով: Այս հեռանկարի մեջ էլ նա վերլուծում ու գնահատում է նոր ժամանակների սկիզբը կանխորոշող գրական իրողությունները:

19-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսի և 90-ականների առաջին կեսի արևմտահայ գրական կյանքը բնութագրվում է գրեթե բացառապես ռեալիզմի համար մղվող պայքարով. ռեալիզմն էր որոշում ժամանակի գրականության դիմագիծը: Սակայն արևմտահայ կյանքը, ամբողջ տասնամյակներով ետ մնացած լինելով զարգացման կանոնավոր ընթացքից, շտապում էր առաջ անցնել: Արևմտահայ հասարակական միտքը, շատ դեպքերում գեղարվեստական աշխարհաճանաչման այս կամ այն որակը դեռ մինչև վերջ ու ամբողջովին չյուրացրած, արդեն ձգտում էր նվաճելու նոր սահմաններ: Դա գեղարվեստական միտումներին հաղորդում էր նոր համադրականություն: Մյուս կողմից՝ հենց ռեալիստական շարժման ներսում հող էր ստեղծվում ռեալիզմից տարբեր ուղղությունների ձևավորման համար: Այդ երևույթը սկսում է նկատելի դառնալ 90-ական թվականների սկզբից:

Գրականության դերի նոր ըմբռնման հետ դարավերջի քննադատության մեջ լայնորեն արժարժվում էին գրականության տենդենցիոզության ու գաղափարայնության հարցերը: Այստեղ ևս պայքար էր գնում, մի կողմից, գրական պահպանողականների, հին դպրոցի ներկայացուցիչների, և մյուս կողմից՝ ռեալիզմի տեսաբանների միջև: Ավելին, գրականության ու կյանքի փոխհարաբերության, իրականության արտացոլման ձևերի ու մեթոդների, հասարակության մեջ գրականության դերի ու այլ հարցերի շուրջը ծագում էին բանավեճերը:

¹ Տե՛ս Վ. Ա. Կիրակոսյան, Արևմտահայ բանաստեղծությունը 1890-1907 թթ., Երևան, 1985, էջ 10:
254

Գրական պահպանողականությունն ամբողջապես գաղափարագուրկ էր համարում ռեալիստական արվեստը, ռեալիստ արվեստագետները մեղադրվում էին անթաքույց միտումնավորության և մերկապարանոց գաղափարայնության մեջ:

Ռոմանտիկական արվեստի ավանդույթներով դաստիարակված մտավորականությունը, որ գրականության կոչումը տեսնում էր միայն հասարակությանը գեղեցիկ գաղափարներով կրթելու մեջ, միանգամից չէր կարող ըմբռնել ռեալիստական արվեստի ամբողջ խորությունն ու բազմակողմանիությունը, երևույթների պատկերման ճշմարտացիությունը, հասարակությանը դաստիարակելու առաջադեմ գաղափարները: Ուստիև ռեալիստական մեթոդի օբյեկտիվ, անկողմնակալ արտացոլումը դիտվում էր իբրև իրականության պասիվ նկարագրություն, լոկ փաստերի ընդօրինակում, «լուսանկարչության պես բան մը, առանց հոգիի, առանց փիլիսոփայության», հետևաբար՝ իդեալագուրկ ու գաղափարագերծ արվեստ: Այդ քննադատները առաջ էին քաշում և պաշտպանում իդեալների, տենդենցների գրականության պահանջը, որը որքան բնական էր նախորդ տասնամյակների ռոմանտիզմի համար, նույնքան էլ հնացած էր հնչում 90-ական թվականներից՝ քննադատական ռեալիզմի համընդհանուր ճանաչման պայմաններում:

Ռեալիստական գեղարվեստի գաղափարայնության հետ էր առնչվում նաև գեղագիտական իդեալի հասկացությունը: Ճիշտ է, 90-ականների գրական քննադատության մեջ գեղագիտական իդեալը չէր դիտվում իբրև ինքնուրույն գեղագիտական կատեգորիա, սակայն շատ դեպքերում քննադատները տարբեր կողմերից էին մոտենում ռեալիստական գեղագիտության բովանդակության բացահայտմանը: Ինքնստիմբյան առաջանում էր այն հարցը, թե ռեալիստական գրականությունը կարո՞ղ է արդյոք առաջադրել իդեալներ:

Առարկելով այն պնդումներին, թե ռեալիստ արվեստագետը չի կարող վեր բարձրանալ իրականության գորշությունից, Չոպանյանը գրում է. «... Եվ ով ըսավ, որ մենք թևեր չունինք. ո՞վ ըսավ, որ մենք ցեխեն ելած չունինք. Այն ի՞նչ ողորմելի գրականություն պիտի ըլլար, եթե ամեն օր միմիայն փողոցները նկարագրեինք - մենք քմահաճույք, երևակայություն չունի՞նք. Նույնիսկ փողոցները նկարագրած ատեն թևի հարվածով մը հանկարծ վեր բարձրանալ չե՞նք գիտեր: Բայց եթե երբեմն աչքերնիս դեպի աստղերը կամ կապույտը կվերցնինք, միշտ հողին վրա ենք, միշտ մարդերուն մեջ, միշտ կյանքի մեջ»¹:

Այդ նոր գաղափարախոսության կրողը Արշակ Չոպանյանի «Ծաղիկ» հանդեսն էր, որն սկսում է հրատարակվել 1895-ի մարտից և որին վիճակված էր հագիվ մի քանի ամսվա կյանք:

Մինչև «Անահիտի» հրատարակությունը՝ 1890-ական թվականների սկզբները, Արշակ Չոպանյանը գրական-հրապարակախոսական կարճ, բայց հարուստ ու բեղմնավոր գործունեություն ունեցավ Կ. Պոլսում, որի պսակը, անշուշտ, 1895-ին խոնքագրած «Ծաղիկ» գրական-գեղարվեստական հանդեսն էր: «Ծաղիկը» մի շարք էական կողմերով կանխորոշեց ապագա «Անահիտի» բնույթն ու գրական բովանդակությունը:

«Ծաղիկի» նպատակն էր արևմտահայ գեղարվեստական միտքը մղել դեպի դարավերջի եվրոպական գրականության և արվեստի դիմագիծը որոշող գեղագիտա-

¹ «Մասիս», 1892, № 3959:

կան որոնումների հունը: Հանդեսն ընդգծում էր, որ «այս դարավերջը, իրապաշտության չափազանց նյութական արվեստին դեմ հակազդեցությամբ մը, նորեն դարձ մը ունեցավ դեպի հոգիին կյանքը»: Այդ հակազդեցությունը, ինչպես ցույց է տալիս «Ծաղիկի» խմբագիրը, իր հետ բերում է շատ բացասական երևույթներ՝ գրականությունը զրկելով «առողջ» ոգուց: Իր ձևավորման փուլում գտնվող արևմտահայ նոր գրականությունը պետք է խուսափեր այդ բացասական ազդեցություններից: Ուստի, ինչպես ասում էր Չոպանյանը, հարկավոր էր հեռու մնալ դարավերջի ֆրանսիական գեղագիտության հիվանդագին դրսևորումներից, օգտակար դասեր քաղել հյուսիսի, մասնավորապես գերմանական և ռուսական առողջ գրականությունից¹: Հանդեսի բոլոր համարների բնաբանը Գյոթեի խոսքերն էին. «Լեցուցեք ձեր միտքն ու սիրտը որչափ ալ լայն ըլլան»:

«Ծաղիկը», իբրև ազգային գրական և քաղաքական կիսամյա պարբերական, Արշակ Չոպանյանը խմբագրել է 1895 թ. մարտից մինչև նոյեմբեր՝ անհամեմատ կարճ մի ժամանակամիջոց իր գոյության տասնամյակը բոլորող հանդեսի համար:

Սակայն 1895-ի «Ծաղիկը» թե՛ ժամանակակիցների և թե՛ հետնորդների վկայությամբ (Լ. Բաշալյան, Արտ. Հարությունյան, Ռ. Ջարդարյան, Ե. Տեմիրճիպաշյան, Հ. Օշական, Թ. Ազատյան, Լեո և ուրիշներ) երևույթ էր ժամանակի պոլսահայ գրական կյանքում: «Բացառիկ կարևորություն ունի 1895-ին Արշակ Չոպանյանի խմբագրությամբ լույս տեսնող «Ծաղիկ» կիսամյա գրական-ուսումնասիրական հանդեսը, զոր կարելի է համարել արևմտահայ իմացական զարթման ու վերելքի զորավոր ազդակ մը», - կենդարյա հեռավորությունից այսպես է գնահատել հանդեսը հասարակական գործիչ, խմբագիր Թորոս Ազատյանը²: Իսկ Հ. Օշականը տարիներ հետո իր «Համապատկերում» հանրագումարի բերելով արևմտահայ գրական կյանքի անցած ճանապարհը՝ գրել է. «Հանդեսի ծրագրումը, գործադրումը կես դար առաջ նորություն, այսօր չեն գերազանցված: ... *Ծաղիկը* թվական մըն էր մեր մամուլին տաբերության մեջ»³:

19-րդ դարի 90-ականների կեսերին նոր-նոր սկզբնավորվող գեղապաշտ շարժումը փաստորեն չուներ գրական այն մամուլը, որն իր շուրջը համախմբեր գրական-գեղարվեստական նորահայտ ուժեր, կազմակերպել նորագույն գեղագիտական միտք: Հրատարակվող պարբերականները, կոչված լինելով այլ խնդիրներ լուծելուն՝ չէին կարող լրացնել գրական հանդեսի այդ պակասը:

Ա. Արփիարյանի և Հ. Շահնագարի «Հայրենիքը», իր բնույթով լինելով նաև գրական թերթ հնարավորության սահմաններում փորձում էր ձայնակցել լինել նոր սերնդի գեղագիտական որոնումներին: Այս իմաստով իսկական հայտնություն էին Չոպանյանի փարիզյան հողված-գրախոսությունները, որոնք, սակայն, թերահավատությամբ էին ընդունվում նույնիսկ թերթի խմբագիր Արփիարյանի կողմից: Բաշալյանի՝ 1893-ին Չոպանյանին հղած նամակներից մեկում կարդում ենք. «Բայց ըսեմ քեզի, որ Հայրենիք-ի կարդացողներու հարյուրին իննսունը չհասկանար կոր քեզի, շվարած կը մնա կոր... գրականության ու գեղարվեստական ծայրագույն նրբությունները բացատրելու կ'ելլես կոր հասարակության մը, որ անոնց այբ-բեն-գիմը չգիտեր դեռ»: Այնուհետև շարունակում է. «Գալով ընդհանրապես գրածներուդ,

¹ Տես **Մնացականյան Լ. Հ.**, Արևմտահայ քննադատական մտքի պատմությունից, Երևան, 1982, էջ 19:

² **Թ. Ազատյան**, Ժամանակ, Հիշատակարան, Կ. Պոլիս, 1948, էջ 36:

³ **Հ. Օշական**, Համապատկեր արևմտահայ գրականության, հ. 5, էջ 309, 325:

կ'ուզես իմ կարծիքս... Ես շատ հաճույքով, խիստ մեծ հաճույքով կը կարդամ գրածներդ, և եթե զուտ գրական և գեղարվեստական հանդես մը ունենայինք՝ միայն զարգացած մտքերու համար, իրենց հարմար շրջանակին մեջ կ'ըլլային հոն» (ԱԳՆ-102,103)¹:

Նոր շարժման գեղարվեստական լուծումների քննության համար «Հայրենիքը» իրոք հարմար շրջանակ չէր: Որքան էլ հոգածու գրական-մշակութային շարժմանը՝ այն հասարակական ընդգծված ուղեգիծ ունեցող օրաթերթ էր և բնականաբար չէր կարող լրացնել գրական-գեղարվեստական հանդեսի պակասը: Եվ հետո՝ «Հայրենիքը» այն ատեն միայն նշանակություն մը ստացած էր, երբ երիտասարդության մտավոր ձգտումը ներկայացնելու հանգամանքը ուներ: Այս նշանակությունը չկրճատվեց պահել երկար ատեն»²: «Հայրենիք» չէր կրցած միևնույն գիծի վրա մնալ»³: 1894-ին կուսակցական հակամետ հայացքների պատճառով Ջոհրապը, Կամսարականը և Կյուրճյանը գժտվել էին Արփիարյանի հետ, հեռացնել խմբագրությունից: Առանձնապես ամուր չէին նաև Չոպանյանի ու Արփիարյանի հարաբերությունները: Բացի այդ, «Հայրենիքը» իր արմատական ժողովրդական ուղղվածության պատճառով հաճախ էր արժանանում թուրք գրաքննության «ուշադրությանը»: Թուրքական կառավարությունը աննշան պատրվակ էր փնտրում թերթի հրատարակությունն ընդմիշտ դադարեցնելու: Այնպես որ, 1895-ի կեսերին «Հայրենիքը» օրհասական վիճակում էր:

«Հայրենիքից» բացի Կ. Պոլսում շարունակում էին հրատարակվել «Արևելքը», «Ճերիտիե շարիգեն» (հայատառ թուրքերեն օրաթերթ), «Բյուրակնը» և «Ծաղիկը»: «Արևելքը» (1884-1896, 1898-1912) օրաթերթ էր:

Արևմտահայ նորագույն գրականության զարգացման հիմքերից մեկը Չոպանյանը համարում է դարերի ընթացքում մեր ժողովրդի կուսակած հոգևոր փորձի յուրացումը:

«Ծաղիկ» հանդեսը թեև ունեցավ կարճատև կյանք, այդուհանդերձ ազգային արվեստի, գրականության, գեղարվեստական և քննադատական մտքի զարգացման նոր մակարդակի սկիզբը դրեց:

1895-96-ին Օսմանյան կայսրությունում քաղաքական նոր ճգնաժամը, հայերի զանգվածային ջարդերը, մոլեգնող բռնությունն ու հալածանքները ծանր հարված հասցրին արևմտահայ գրական և հասարակական մտքին: «Ծաղիկ» հանդեսը, ինչպես շատ պարբերականներ, դադարեց գործել:

Սակայն արևմտահայ միտքը կարճ ժամանակում շարունակում է իր ընթացքը: Երկրից հեռացած մտավորականները աշխարհի տարբեր ափերում հիմնում են նոր պարբերականներ՝ հեռվից հեռու ձգտելով պահպանել ընդհատված գրական առաջընթացը: Այս տեսակետից բացառիկ է «Ամառիտ» հանդեսի դերը հայ մշակութային պատմության մեջ: Ազգային, գրական-գեղարվեստական այդ հանդեսի հրատարակությունը սկսվել է 1898-ին Փարիզում և ընդմիջումներով շարունակվել մինչև 1949 թվականը (1899-1911, նոր շրջան՝ 1929-1941, 1946-1949): Շուրջ երեսուն տարի լի-

¹ 1893-ին նորերից Տ. Քելեկյանը նպատակ է ունեցել Կ. Պոլսի «Գանձ» շաբաթաթերթը (1885) վերահրատարակել գրական բովանդակությամբ, սակայն դա նրան չի հաջողվել: Հետաքրքիր է, որ այդ առիթով Լ. Բաշալյանը Չոպանյանին հիշեցնում է, որ Փարիզից ուղարկած նրա հոդվածները «շատ լավ պիտի հարմարեին Գանձ-ին», եթե հնարավոր լիներ այն հրատարակել:

² «Մասիս», Կ. Պոլիս, 1892, թիվ 1, էջ 1:

³ Ա. Ալպոյաճյան, Անհետացող դեմքեր, Գրիգոր Ջոհրապ, Կ. Պոլիս, 1919, էջ 126:

նելով հրապարակի վրա՝ պարբերականն անփոխարինելի դեր է կատարել հայ մշակույթի, գրականության և գեղարվեստի զարգացման մեջ, մեծապես նպաստել հայ ու եվրոպական ժողովուրդների գրական կապերի ամրապնդմանը, արևմտահայոց ազգային դատի պաշտպանությանն ու Սփյուռքի և Խորհրդային Հայաստանի կապերի զարգացմանն ու զորացմանը և հայ պարբերական մամուլի հարուստ պատմության մեջ գրավել իր ուրույն և առաջնակարգ տեղը:

«Անահիտ» հանդեսի հրատարակությունը ձեռնարկելիս Չոպանյանը պարզորոշ տեսնում էր իր գործունեության լայնահուն, բայց դժվարին ուղին, որը կոչված էր նպաստելու հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարին: Ահա սա էր Չոպանյանի բազմաբեղուն գործունեության հիմնական նպատակը: «Գրականությունը, բանասիրությունը, նրա ջանքերով հայ մշակույթի տարածումը Եվրոպայում և օտար մշակույթի տարածումը հայոց մեջ, նրա քաղաքական-հասարակական գործունեությունը, լրագրությունը, բոլորը և ամբողջովին այդ հիմնական նպատակի սպասավորներն էին»¹, - գրում է Կ. Դալլաքյանը: Այդ գլխավոր նպատակին հասնելու համար անհրաժեշտ էր լուծել մի շարք կարևորագույն խնդիրներ:

Հայ գրականության զարգացման ուղիների շուրջ «Անահիտ» հանդեսի ծրագրային հղացումներն ու մտահոգությունները սոսկ հեռանկարային հիմնահարցեր չէին: Դրանց ստեղծագործական արտահայտությունն ու գործնական կիրառությունը «Անահիտը» տեսնում էր ժամանակի գեղարվեստական գրականության մեջ, իր տեսական դրույթները հաճախ հաստատում կոնկրետ նյութերով, ստեղծագործական այն նվաճումներով, որ արդեն դարասկզբին ձեռք էր բերել հայ գեղարվեստական միտքը:

Չոպանյանի գրական նախափորձերը եղել են բանաստեղծություններ, գերազանցապես սիրո ու բնության գեղեցիկ պատկերներ: Իսկ հետո՝ արձակ էջեր, գրական-հրապարակախոսական բնույթի հոդվածներ, թարգմանություններ (ֆրանսերենից հայերեն, հայերենից ֆրանսերեն):

Չոպանյանի նախաձեռնությամբ «Անահիտ» հանդեսը ունենալու էր յուրօրինակ բովանդակություն և ձև: Հանդեսի էջերում տեղ էին գտնում գեղագիտական առումով ինքնատիպ ու նոր ստեղծագործություններ: Դրանք, մի կողմից, միտված էին պահպանել հայ արվեստի ու մշակույթի ինքնությունը, մյուս կողմից՝ դառնալու համաշխարհային նշանակություն ունեցող արժեքներ:

Ինքը՝ Չոպանյանը, «Անահիտի» էջերում այսպես է բնորոշում գրականության և գեղարվեստի ազգապահպան նշանակությունը. «Գրականությունը, գեղարվեստը՝ ազգի մը պատիվը, ամենաթանկագին գանձը, մեծության ու փառքի աղբյուրը և նույն իսկ կյանքի հիմունքը, ինքնապահպանության ամենեն ապահով միջոցն են: Կարելի է ըսել թե ազգ մը իսկապես գոյություն ունի այն ատեն միայն երբ երևան կը բերե ինքնահատուկ գեղարվեստ մը»²:

Ինքնության միտումը նոր չէր հայ գրականության, հայ գեղարվեստի համար: Սակայն դարերի սահմանագծում հայ ժողովրդի քաղաքական ծանր կյանքի, պատմական ճակատագրի թելադրանքով ազգային ինքնության գաղափարը ստանում էր ծայրահեղորեն կարևոր նշանակություն:

¹ Դալլաքյան Կ., Արշակ Չոպանյան: Կյանքը և գործը, Երևան, 1987, էջ 107:

² «Անահիտ», ԺԱ տարի, 1909-1910, թիվ 11-12, էջ 241:

Քաղաքակիրթ ժողովուրդների շարքում հաստատվելու, համաշխարհային քաղաքակրթության մեջ իր տեղը զբաղեցնելու և, առհասարակ, ազգային գալիք հեռանկարները ճշտելու տեսանկյունից սա թերևս ժամանակի ամենից խորունկ և ճշմարիտ կռահումն էր:

Չոպանյանն «Անահիտ» գեղագիտական համակարգն ուղղորդել է դեպի գեղեցիկի գաղափարը: Ամենից առաջ այն ըմբռնվում է իր ուղղակի և անմիջական նշանակությամբ, իբրև իրերի և երևույթների յուրօրինակ արժեք, որ գեղագիտական հաճույք է պատճառում, դաստիարակում ճաշակ, ազնվացնում հոգին:

Արվեստում գեղեցիկը ենթադրում է գեղարվեստական ձևի, ոճի նրբության, արտահայտության կատարելություն: Մի բան, որ անհրաժեշտ է արվեստի մեծ գործեր ստեղծելու համար, մանավանդ բանաստեղծության մեջ. «Բանաստեղծությունը պիտի ամեն բանե առաջ անկեղծ ըլլա և ինքնաբուխ, ու Օգտակարին չզոհե երբեք Գեղեցիկը, որովհետև Գեղեցիկը ինքնին շատ բարձր տեսակե օգտակարություն մըն է»¹:

«Անահիտ» հանդեսը ստեղծվեց իր խմբագիր Ա. Չոպանյանի արվեստի և գրականության հանդեպ ունեցած վեհ ձգտումների, գեղարվեստական և գեղագիտական բարձր մշակված ճաշակի արդյունքում:

Չոպանյանը նույն դիրքերից է լուծում նաև գրականության ձևի ու բովանդակության հարցը: Այսպիսի դրվածքը, բնականաբար, բացառում է «Անահիտ» «գեղեցկագիտական գրականության» տեսությանը պարտադրվող «Արվեստը արվեստի համար» սահմանումը:

«Անահիտ» հանդեսը հետևողականորեն պաշտպանում է ժողովուրդների գեղարվեստական ավանդույթների փոխազդեցության և փոխներգործության կարևորագույն դրույթը, հայ գրականության առաջընթացի հիմնական գործոն է համարում եվրոպական ու համաշխարհային գրականության փորձի քննադատական յուրացումը:

Бабаян Асмик, Эстетические взгляды Аршака Чопаняна в журнале «Цахик» и «Анаит»-

В конце 19-го века и в начале 20-го века в развитии мировой истории искусства произошли значительные изменения, которые в основном были связаны с социальными и культурными событиями, а также с новыми взглядами на реальность.

Знаменитый армянский филолог, критик, писатель, журналист и общественный деятель Аршак Чопанян в своих произведениях и особенно в журналах «Цахик» и «Анаит», опубликованными им, выразил своеобразный эстетический подход и вкус. Его эстетические взгляды были основаны на национальной идеологии в искусстве, на романтизме и на реализме, на гармонии образа и содержания.

Hasmik Babayan, The aesthetic views of Arshak Chopanyan in journals «Tsaghik» and «Anahit».

At the end of 19th century and at the beginning of the 20th century in the development of the world art history significant changes took place, which were based on current events of social and cultural life and the new perception of the reality.

¹ «Անահիտ», թիվ 3, էջ 48:

Eminent Armenian philologist, writer, critic, journalist and public figure Arshak Chopanyan in his works and especially in the literary and artistic magazines "Tsaghik" and "Anahit" published by him, demonstrated a unique approach and taste. His aesthetic views were based on national ideology, romanticism and realism, and also on harmony of the shape and content in art.

